ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

N 258
21 նոյեմբեր 2016թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով <<ՏԻՄ>> ՀՀ օրենքի 30 հոդվածի 8-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ավագանու N40-Ա, N41-Ա, N42-Ա որոշումները:

22/11/2016

X _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան
032268781

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 40-Ա

06-041-0122-0008 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը, պարզվեց, որ 06-041-0122-0008 ծածկագրում առկա է համայնքային սեփականության 0.09359 հա մակերեսով հողամաս, սակայն ՀՀ կառավարության 21 հուլիսի 2005 թ-ի N 1266-Ն որոշմամբ չի փոխանցվել Լեռնապատ համայնքին, ուստի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 56 հոդվածի 5-րդ կետով և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ նախագահի 1 հունիսի 2010թ-ի N 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 2-րդ բաժնի, 9-րդ կետով՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

06-041-0122-0008 ծածկագրից առանձնացված 0.09359 հա հասարակական կառուցապատման հողամասը՝ խաղահրապարակի տարածքը համաձայն հատակագծի ճանաչել համայնքային սեփականություն:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 41-Ա

ԼԵՌՆՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 56 հոդվածի 5-րդ կետով, 48 հոդվածի 3-րդ կետով, ‹‹Իրավական ակտերի մասին›› ՀՀ օրենքի 72 հոդվածով և հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարին գյուղատնտեսական գործունեության նպատակով ներքոնշյալ հողամասերը մրցույթային կարգով տրամադրել վարձակալությամբ, մինչև 25 տարի ժամկետով, մրցույթի համար մեկնարկային գին ընդունել համաձայն 1, 2 կետերի.

1. Լեռնապատ համայնքի 06-041-0203-0096 ծածկագրով 0,12հա վարելահողի համար վարձավճարի մեկնարկային գին սահմանել 1400 ՀՀ դրամ:

2. Լեռնապատ համայնքի 06-041-0201-0090 ծածկագրով 1,30187 հա արոտավայրի համար վարձավճարի մեկնարկային գին սահմանել 14000 ՀՀ դրամ:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնապատ համայնքի ղեկավարի 14.11.2016թ. թիվ 32-Ա որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ

2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ

3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, հասցե գ.Լեռնապատ 27փ. 7/6,
lernapat.lori@mta.gov.an 032268781

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 թվականի N42-Ա

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ավագանին որոշում է.

1. Հաստատել Լեռնապատի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնապատ համայնքի ղեկավարին՝ Լեռնապատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխությունների կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնապատ համայնքի ավագանու 01 հուլիսի 2015 թ.-ի թիվ 18-Ա որոշման հավելվածը:

4. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերը ուժի մեջ են մտնում Լեռնապատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված

Լեռնապատ համայնքի ավագանու

15.11.2016թ.-ի N42-Ա որոշման

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. *Աշխատակիցների թվաքանակը՝ 15 :*
2. *Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝*

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ հազ. դրամ/
Համայնքի ղեկավար	1	260,0
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	139,0
Համայնքի ղեկավարի օգնական	1	150,0
Աշխատակազմի քարտուղար	1	138,0
Առաջատար մասնագետ-հաշվապահ	1	135,0
Առաջատար մասնագետ	1	135.0
1-ին կարգի մասնագետ	3	117,0
2-ին կարգի մասնագետ	1	115,0
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄ		
Հավաքարար	1	80,0
Պահակ	1	98,0
Պահակ	1	72,8
Վարորդ	1	110,0
Վարորդ ավտոբուսի	1	110,0
ընդանենը	15	

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան